ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-2»

ք. Երևան «24» դեկտեմբերի 2015թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Գրիգորյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ճանապարհ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն Է. Բեզոյանի ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Դիլիջանի թունելի պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և կատարման ժամկետ է սահմանվում մինչև՝ 31.12.2020թ.-ը ներառյալ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 2) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 (քառասուն) օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 99 461 880 (իննսունինը միլիոն չորս հարյուր վաթսունմեկ հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 2017 և հաջորդող տարիներին աշխատանքները կկատարվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրի կնքման տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը կլուծարվի, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվի:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

---

[1] *Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կիրարկվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները կազմված՝ 10 էջից, հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	«Ճանապարհ» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 28	ՀՀ Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ
Կենտրոնական Գանձնակետարան	«Անելիք բանկ» ՓԲԸ Աբովյանի մ/6
Հ/Հ 90001012136	Հ/Հ 11803011041500
ՀՎՀՀ 02565518	ՀՎՀՀ 03512651
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«24» դեկտեմբերի 2015 թ. կնքված
N «ԳԱԿ-ԵՀԱՇՁԲ-15/2-ՏՄԻԳ-16/1-2»
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Դիլիջանի թունելի պահպանման աշխատանքների գնման

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Աշխատանքի անվանումը - Դիլիջանի թունելի պահպանման աշխատանքներ

1.2. Նշանակությունը (խնդիրը) - Դիլիջանի թունելի պահպանում

1.3. Հիմքը - Անվտանգության ապահովում

1.4. Ֆինանսավորման աղբյուրը - Հայաստանի Հանրապետության պետական բյուջե

1.5. Աշխատանքի կատարման ժամկետը - 2016թ.-ի հունվարի 1-ից մինչև 2020թ.-դեկտեմբերի 31-ը

1.6. Պատվիրատու - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն

2. Տեխնիկական բնութագիր

1. Ապահովել Դիլիջանի թունելի շահագործումը և նրա կազմում ընդգրկված օբյեկտների ամբողջականությունը , անվնաս պահպանությունը , մաքրությունը և նորմալ աշխատանքը:

2.Դիլիջանի թունելի պահպանման հիմնական սկզբունքն է՝ թունելի կառույցների, սարքավորումների և այլ տարրերի վնասվածքների առաջացման կանխարգելումը, որի համար անհրաժեշտ է իրականացնել թունելի գնման, հսկողության, խնամքի և ընթացիկ նորոգման աշխատանքներ:

3. Դիլիջանի թունելի պահպանման հիմնական տեխնիկական պահանջները, որոնք պարտադիր են թունելի պահպանման կապալառու կազմակերպությունների (այսուհետ՝ կապալառու) կողմից կատարման համար, հետևյալն են՝

<u>1) Գնումների և դիտարկումների ամենօրյա իրականացում</u>: *Գնումները և դիտարկումները պետք է կատարվեն կապալառուի հերթափոխի պետի կողմից ամեն օր: Կապալառուի հերթափոխի պետը պարտավոր է գրանցումներ կատարել թունելի պահպանման հերթափոխային մատյանում, որը տվյալ հերթափոխի ավարտին փոխանցվում է հաջորդ հերթափոխի պետին, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ գնման արդյունքում հայտնաբերված անսարքությունները կամ թերությունները հերթափոխի ուժերով վերացնելու ուղղությամբ, երթևեկության անվտանգությանը վտանգ սպառնալու կամ արտակարգ իրավիճակների դեպքում, շտապ (մեկ ժամվա ընթացքում) զեկուցել պատվիրատուին՝ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով:*

<u>2) Հսկողության ապահովում</u>: *Հսկողությունն իրականացնում է կապալառուի թունելի պահպանման պատասխանատուն տվյալ հերթափոխի պետի հետ համատեղ՝ առնվազն*

շաբաթական մեկ անգամ: Արդյունքները և հանձնարարականները (ներառյալ կատարման ժամկետները) գրանցվում են կապալառուի թունելի պահպանման և հերթափոխային մատյաններում ու համապատասխանաբար ստորագրվում են:

Իրականացվող զննումների և հսկողության ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձվի թունելի երեսարկման և պատերի սվաղի վիճակին, երթևեկամասի և մայթերի ծածկի վրա ճաքերի ու փոսերի առկայությանը, շինարարական կոնստրուկցիաների ճկվածքներին, սվաղի կպածությանը կոնստրուկցիաներին, պատերին ու առաստաղին ամրացված սարքերի կայունությանը, ջրի հոսքի և կաթոցների ինտենսիվությանը: Զննման ժամանակ անհրաժեշտ է պիկետաժավորել և քարտեզագրել առկա բոլոր ջրահոսքերը, կաթոցները, խոնավացած հատվածները, նկարագրել դրանց սեզոնայնությունը, ջրի ելքերի ծավալները, հոսքերի փոփոխման շարժը, ձմեռային սեզոնին՝ սառցակալման երևույթները: Թունելների երեսարկի վիճակի զննման ժամանակ անհրաժեշտ է պիկետաժավորել և քարտեզագրել առկա բոլոր վնասվածքները (ճաքեր, բետոնի քայքայված հատվածներ, բետոնի շերտազատման հատվածներ, պատերի սվաղի քայքայված հատվածներ, ամրանների բետոնե-պաշպանիչ շերտի բացակայություն):

Թունելի պատերի և առաստաղի վրա 0.5 մմ-ից լայն ճաքերի սահմանները նշվում են սվաղի վրա. իսկ արագ զարգացող ճաքերին ամրացվում են "փարոսներ"՝ դրանց զարգացման համապատասխան դիտարկումը իրականացնելու նպատակով: "Փարոսներ"-ը համարակալվում են և դրանց տեղադրությունը գրանցվում է կապալառուի թունելի պահպանման և հերթափոխային մատյաններում: Ամսական առնվազն մեկ անգամ կապալառուի հերթափոխի պետը ստուգում է "փարոսներ"-ի վիճակը և համապատասխան գրառում կատարում կապալառուի թունելի պահպանման և հերթափոխային մատյաններում:: Ճաքերի վտանգավորության աստիճանը որոշվում է՝ ելնելով կառույցի կոնստրուկտիվ առանձնահատկություններից և հաշվի առնելով նրա վրա ազդող բոլոր գործոնները (լեռնային և հիդրոստատիկ ճնշում, սեփական քաշ, բետոնի կծկում, ջերմային ազդեցություն և այլն):

Տարվա անձրևային սեզոնից առաջ և դրա ավարտին կապալառուի թունելի պահպանման պատասխանատուն ստուգում է ճակատամուտքերի հանույթների, լիցքերի, հենապատերի, ջրահեռացման համակարգի, լեռնային առուների և ճանապարհային կահավորանքի վիճակը և պահանջվող տեխնիկական նորմերին դրանց համապատասխանեցնելու նպատակով կատարված աշխատանքները՝ արդյունքների մասին գրանցում կատարելով կապալառուի թունելի պահպանման մատյանում:

***<u>3) Խնամքի և ընթացիկ նորոգման ապահովում</u>**: Թունելի կոնստրուկտիվ տարրերի, կառույցների, սարքավորումների, համակարգերի ընթացիկ նորոգման և խնամքի աշխատանքների հիմնական նպատակն է՝ կանխել դրանց ժամանակից շուտ մաշվածությունը: Այդ նպատակով կապալառուն պարտավոր է իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ՝ վերացնելով վնասվածքներն ու անսարքությունները:*

Որպես խնամքի և ընթացիկ նորոգման աշխատանքներ, կապալառուն պարտավոր է իրականացնել թունելի լվացման, աղբի հեռացման, հակահրդեհային ջրատար համակարգի, օդափոխության համակարգի, լուսավորման համակարգի, կապի և ազդանշանային համակարգի, թունելային շինությունների և կահավորանքի , երթևեկամասի և մայթերի շահագործման համար անհրաժեշտ վիճակում գտնվելու ապահովման, թունելի պատերի և կամարի վրա առաջացած թերությունների (ճաքերի և վնասվածքների) վերացման աշխատանքներ, իսկ ձմեռվա սեզոնին իրականացնել նաև թունելի պատերի, առաստաղի և հատակի վրա սառցաբեկորների և սառցալեզվակների հեռացում :

4. Ստորև բերված են թունելի հիմնական տարրերի և կոնստրուկտիվ համակարգերի պահպանման հիմնական տեխնիկական պահանջները, որոնց ապահովման նպատակով կապալառուն պարտավոր է տեղամասում իրականացնել շուրջօրյա հերթապահություն:

Թունելի պահպանման ենթակա կոնստրուկտիվ համակարգերը և դրանց պահպանման հիմնական պահանջները

ա) Երթևեկամաս, մայթեր և դրանց պահպանման հիմնական պահանջները

1) Երթևեկամասի և մայթերի ծածկը մշտապես պետք է լինի մաքուր և զերծ ավելորդ առարկաներից ու շինարարական նյութերից: Արգելվում է շրջված կամ շարժվող անվահիրիչ եզրաքարերի, ձյան և սառույցի առկայությունը: Ձյան տեղումների դադարումից 3 ժամ հետո ճակատամուտքից հաշված 100 մ երկարությամբ ճանապարհահատվածը պետք է լինի մաքրված ու մշակված հակամերկասառուցային նյութերով:

2) Արգելվում է 3 մմ-ից ավել լայնությամբ ճաքերի առկայություն ծածկի մակերևույթում: Ճաքերը պետք է մաքրվեն սրածայր քերիչներով, փոշեզրկվեն և լցվեն բիտումային խառնուրդով կամ բիտումային մաստիկով:

3) Փոսերի առկայությունը 1000 ք.մ. ծածկի վրա պետք է լինի ոչ ավել կան 5 ք.մ.: Փոսային նորոգման աշխատանքները պետք է կատարվեն երթևեկության նվազագույն ինտենսիվության պայմաններում, աշխատավայրը պետք է կահավորվի անհրաժեշտ ճանապարհային և լուսաազդանշանային համակարգով: Ծածկի փոսային նորոգումը պետք է կատարվի շինարարական նորմերի և տեխնիկական պայմանների պահանջներին համապատասխան և նույն տիպի ու հատիկային կազմ ունեցող ասֆալտբետոնյա խառնուրդով՝ ապահովելով շինարարական նորմերով նախատեսված անհրաժեշտ խտացումը: Այն դեպքում, երբ ծածկի փոսային նորոգման աշխատանքը կատարվում է թունելի ամբողջ երկարությամբ և լայնությամբ, տրանսպորտային միջոցների երթևեկությունը թունելով պետք է ժամանակավորապես դադարեցվի և իրականացվի լեռնանցքային վերգետնյա կրկնորդ երթուղով:

4) Երթևեկամասի ծածկի հետ անիվի կառչման գործակիցը պետք է տարեկան մեկ անգամ ստուգվի և լինի ոչ պակաս 0.6-ից կամ ավտոմեքենայի արգելակումից հետո մինչև նրա լրիվ կանգառը անցած ճանապարհը չպետք է գերազանցի 10, 24, 42 մ համապատասխանաբար ավտոմեքենայի 40, 60, 80 կմ/ժամ արագությամբ շարժվելու դեպքում:

5) Թունելի երթևեկամասը և մայթերը շաբաթական առնվազն 3 անգամ, իսկ պատերն ամսական մեկ անգամ պետք է լվացվեն մրից ու փոշուց՝ հակահրդեհային ջրատար համակարգի միջոցով կամ ջրցան մեքենայով:

բ) Ջրահեռացման համակարգ և դրա պահպանման հիմնական պահանջները

1) Ջրահեռացման համակարգի տարրերը մշտապես պետք է գտնվեն մաքուր վիճակում և ապահովեն ջրի ազատ հոսքը:

2) Թունելի ճակատամուտքերի եզրապատերի և հենապատերի հետնամասերում գտնվող վաքերը, ինչպես նաև ջրահեռացման լեռնային առուները պետք է լինեն մաքուր, զերծ տիղմից ու թափվածքներից և ապահովեն ջրի ազատ հոսքը:

3) Մայթերի և պաշտպանիչ գոտու եզրաքարերի ու թունելի առանցքով տեղադրված ցամաքուրդային և ջրթող խողովակները մշտապես պետք է լինեն մաքուր և զերծ տիղմի նստվածքներից ու թափվածքներից: Դրանց խցանումների հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է մեխանիկական եղանակով բացել խցանումը և լվանալ:

4) Տիղմազտիչները մշտապես պետք է լինեն մաքուր և առանց հատակի ու պատերի ճաքերի, որոնցով արտահոսող ջուրը կարող է պատճառ դառնալ թունելի հակադարձ թաղի կամ սալի կոնստրուկցիայի քայքայման և նրա նախագծային կրողունակության կորստի:

5) Դիտահորերը մշտապես պետք է լինեն սարքին ու մաքուր և ապահովեն դրանցում տեղադրված սարքավորումների և հաղորդակցումների անխափան աշխատանքը:

6) Թունելային երեսարկման պատերից գրունտային ջրերի հոսքի, կաթոցի կամ խոնավացման տեղերի հայտնաբերման դեպքում, սվաղի հաստության հաշվին, առանց վնասելու մետաղական ցանցը, պետք է ստեղծել ջրահավաք փորվածք, մեկուսացնել մակերեսը բիտումով կամ ջրաղիմացկուն ներկով, ճկափողի շուրթը առանձով կպցնել փորվածքի հատակին, իսկ մյուս ծայրը տեղադրել մոտակա տիրմազտիչի մեջ: Այն դեպքում, երբ փողրակը չի ապահովում ջրահեռացումը (ջրի ելքը մեծ է 1-3 լիտր/ժամ) պատերի վրա արվում են ատամնառրմածքներ և դրանք միացվում են տիրմազտիչին: Թունելի առաստաղային մասից հոսող ջուրը հավաքվում է մետաղական կամ պլաստիկ կախովի խողովակներով, փողրակներով կամ ատամնառրմածքներով : Ջրի հոսքի վերացումից հետո ջրահավաք փորվածքները և ատամնառրմածքները մշակվում են ցեմենտի շաղախով: Անհրաժեշտ է արգելակել թունելի պատերից և առաստաղից առաջացող ջրահոսքերը և ջրի կաթոցները թունելի երթևեկամասի ու մայթերի վրա: Պարտադիր անհրաժեշտ է կատարել բոլոր ջրահոսքերի և կաթոցների կազմակերպված հեռացում դեպի թունելի դրենաժային համակարգ: Ձմեռվա սեզոնին նաև անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ առկա ջրահոսքերի և կաթոցների սառցակալման դեմ: Մշտապես պետք է իրականացվեն ջրահոսքերի ջրամեկուսացման աշխատանքներ թունելի երեսարկի ողջ մակերեսով:

գ) Օդափոխության համակարգ և դրա պահպանման հիմնական պահանջները

1) Ամսական առնվազն երկու անգամ անհրաժեշտ է ստուգել բոլոր օդափոխիչների աշխատանքը՝ շահագործման կանոններին դրանց համապատասխանությունը որոշելու նպատակով և անսարքությունների բացահայտման դեպքում իրականացնել վերականգնման աշխատանքներ: Արդյունքների մասին պետք է գրանցում կատարել կապալառուի թունելի պահպանման մատյանում:

2) Ամսական առնվազն երկու անգամ անհրաժեշտ է ստուգել օդափոխիչ հորանների և օդամուղ անցքերի մաքրությունն ու անցքերի փականների աշխատանքը և անսարքությունների բացահայտման դեպքում իրականացնել վերականգնման աշխատանքներ: Արդյունքների մասին պետք է գրանցում կատարել կապալառուի թունելի պահպանման մատյանում:

3) Ածխածնի օքսիդի (CO) սահմանային թույլատրելի պարունակությունը օդերևութաբանական անբարենպաստ պայմանների և տրանսպորտային միջոցների առավելագույն հոսքի դեպքում չպետք է գերազանցի 100 մլ.գրամ/խոր.մ: Ածխածնի օքսիդի (CO) պարունակությունը թունելում օպերատիվ որոշելու համար պահպանում իրականացնող կազմակերպությունը պարտադիր պետք է ունենա համապատասխան սարքավորում:

4) Օդամղիչներով մղվող օդի արագությունը թունելի տրանսպորտային ծավալում (եզրաչափերից ներս գտնվող հատվածում), չհաշված երթևեկող տրանսպորտային միջոցների ազդեցությունը, չպետք է գերազանցի 6մ/վրկ:

5) Ամսական առնվազն երկու անգամ անհրաժեշտ է ստուգել օդափոխիչների աշխատանքի կառավարումը ինչպես կենտրոնական կառավարման խցիկից, այնպես էլ անմիջական օդափոխիչների խցիկից և անսարքությունների բացահայտման դեպքում իրականացնել վերականգնման աշխատանքներ: Արդյունքների մասին պետք է գրանցում կատարել կապալառուի թունելի պահպանման մատյանում:

6) Թունելի պահպանման մատյում անհրաժեշտ է կատարել օդափոխիչների աշխատանքի վերաբերյալ ամենօրյա գրանցումներ՝ նշելով յուրաքանչյուր օդափոխիչի աշխատած ժամանակահատվածները և ռեժիմները:

դ) Լուսավորման համակարգ և դրա պահպանման հիմնական պահանջները

1) Օրական առնվազն մեկ անգամ անհրաժեշտ է ստուգել լամպերի, վարդակների, խրոցների, վահանների առկայությունը և դրանց աշխատանքը, ինչպես նաև լուսավորման

համակարգի ավտոմատ կառավարումը: Դրանց բացակայության կամ անսարքության դեպքում անհրաժեշտ է իրականացնել վերականգնման աշխատանքներ: Արդյունքների մասին պետք է գրանցում կատարել կապալառուի թունելի պահպանման մատյանում:

2) Թունելի լուսավորությունը պետք է մշտապես ապահովի բնական լուսավորությունից արհեստականին անցման սահունությունը: Այդ նպատակով, թունելի ճակատամուտքերից սկսած երթևեկամասի առանցքային հատվածում ծածկի հորիզոնական լուսավորությունը պետք է լինի ստորև բերված աղյուսակում տրված պահանջներից ոչ պակաս.

Լուսավորման ռեժիմ	*Լուսավորությունը (լյուքսերով) ճակատամասից հաշված հեռավորության վրա (մետրերով)*					
	0	*25*	*50*		*75*	*100 և ավելի*
Ցերեկային ժամեր	*750*	*600*	*400*		*200*	*30*
Գիշերային ժամեր	*30*	*30*	*30*		*30*	*30*

3) Երթևեկամասի ծածկի լուսավորման առավելագույն պայծառության հարաբերությունը հարևան հատվածի լուսավորման նվազագույն պայծառությանը չպետք է գերազանցի 3:1-ին:

4) Թունելների օդափոխության և լուսավորության ուղիները , ինչպես նաև սպասարկման տարածքները մշտապես պետք է ունենան լուսավորման հնարավորություն՝ զննումները, ուսումնասիրությունները և նորոգման աշխատանքները իրականացնելու համար:

5) Լուսավորության ցուցանիշները թունելում օպերատիվ որոշելու համար պահպանում իրականացնող կազմակերպությունը պարտադիր պետք է ունենա համապատասխան սարքավորում:

ե) Կապի, հակահրդեհային, արգելափակման և ազդանշանային համակարգեր և դրանց պահպանման հիմնական պահանջները

1) Շաբաթական առնվազն երկու անգամ անհրաժեշտ է ստուգել թունելի ճակատամուտքերի մոտեցումներում տեղադրված անհրաժեշտ ճանապարհային նշանների առկայությունը և դրանց ընթեռնելիությունը: Անհրաժեշտության դեպքում դրանք փոխարինել նորերով: Արդյունքների մասին գրանցում կատարել կապալառուի թունելի պահպանման մատյանում:

2) Շաբաթական առնվազն երկու անգամ անհրաժեշտ է ստուգել թունելի հեռախոսակապի և բարձրախոսների աշխատանքը: Անսարքության դեպքում անհրաժեշտ է իրականացնել վերականգնման աշխատանքներ: Արդյունքների մասին պետք է գրանցում կատարել կապալառուի թունելի պահպանման/շահագործման պատասխանատուի մատյանում:

3) Մշտական հսկողություն ապահովել թունելի երկարությամբ խցիկներում տեղադրված մուտքն արգելող ազդանշանային համակարգի (ինչպես թունելի խցիկներում տեղադրված կետերից, այդպես էլ կենտրոնական կառավարման խցիկից) նորմալ աշխատանքների վերաբերյալ:

է) Թունելային շինություններ, կահավորանք և դրանց պահպանման հիմնական պահանջները

1) Մայթերը պետք է լինեն մաքուր

2) Ճանապարհային նշանները պետք է լինեն ընթեռնելի և տեղադրված "Ճանապարհային ոստիկանություն" ծառայության հետ համաձայնեցված ճանապարհային

նշանների տեղաբաշխման սխեմային համապատասխան: Խստիվ արգելվում է պետական ստանդարտներին չհամապատասխանող նշանների տեղադրումը:

3) Մայթերը և պաշպանիչ գոտու եզրաքարերը պետք է լինեն նշագծված:

4) Թունելի առանցքային գծանշումը մշտապես պետք է լինի ընթեռնելի և համապատասխանի գործող նորմերին:

5) Թունելի մուտքային մասերում պատերը երկու կողմից պետք է ներկված լինեն լուսանդրադարձիչ սպիտակ ներկով՝ առնվազն 100 մ երկարությամբ և առնվազն 1.5մ բարձրությամբ (թունելի մյուս հատվածների պատերը պետք է ներկված լինեն համաձայն գործող նորմերի):

Ը) Թունելի երեսարկ, օդափոխության ուղիներ, հորիզոնական սալ, միջնորմներ և դրանց նորոգման հիմնական պահանջները

1) Թունելում առաջացած ճաքերը պետք է նորոգվեն՝ հետագա զարգացումը կանխելու նպատակով: Ըստ անհրաժեշտության ճաքերը պետք է սվաղվեն կամ կատարվի տորկրետացում մետաղական ցանցի և որմակերի հեղյուսների (անկերների) տեղադրումով:

2) Ամրանները պետք է փակված լինեն բետոնի պահպանիչ շերտով: Ամրանների բաց լինելու դեպքում անհրաժեշտ է վերականգնումը իրականացնել սվաղով կամ տորկրետացումով:

3) Թունելի երեսարկի վրա առաջացած վնասվածքները և/կամ թերությունները (բետոնի քայքայված և/կամ շերտազատված հատվածներ) պետք է վերականգվեն՝բետոնացման կամ տորկրետացման աշխատանքների իրականացմամբ:

4) Թունելի պատերի վրա առաջացած վնասվածքները և/կամ թերությունները (սվաղի քայքայված և/կամ շերտազատված հատվածներ) պետք է վերականգվեն՝ սվաղման աշխատանքների իրականացմամբ:

5. Թունելի պահպանման կապալառու կազմակերպությունը պարտավոր է վարել թունելի պահպանման աշխատանքների մատյան, որը պետք է լինի կարված, համարակալված էջերով և պատվիրատուի կողմից կնքված: Մատյանը պետք է պահվի կապալառու կազմակերպություն թունելի պահպանման հերթապոխի գրասենյակում և տրամադրվի տվյալ ավտոմոբիլային ճանապարհի պետական կառավարման մարմնի և Հայաստանի Հանրապետության ոստիկանության <<Ճանապարհային ոստիկանություն>> ծառայության լիազոր ներկայացուցիչներին՝թունելի պահպանման վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ գրանցելու նպատակով: Յուրաքանչյուր քաղաքացի իրավասու է տվյալ ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնին և/կամ տվյալ թունելի պահպանումը իրականացնող կազմակերպությանը իրազեկել թունելի վիճակի մասին:

6. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ճանապարհների վրա գտնվող թունելների պահպանման աշխատանքները ուսումնասիրվում, գնահատվում և ընդունվում են տվյալ ավտոմոբիլային ճանապարհի պետական կառավարման մարմնի ճանապարհների պահպանման պատասխանատու ստորաբաժանման (այսուհետ՝ պատասխանատու) կողմից: Ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնի ճանապարհների պահպանման պատասխանատու է սահմանվում <<Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

7. Թունելի պահպանման աշխատանքները ընդունվում են հետևյալ կերպ՝

ա) Պահպանման միջանկյալ դիտարկում:

Թունելի պահպանման միջանկյալ դիտարկումները իրականացվում են յուրաքանչյուր ամիս՝ առնվազն երեք անգամ: Միջանկյալ դիտարկման ժամանակ ստուգվում է թունելի պահպանման համապատասխանությունը պահանջներին և առկա թերություններն արձանագրվում են թունելի պահպանման աշխատանքների միջանկյալ դիտարկման ամփոփագրում : Արձանագրված թերությունները և դրանց վերացման ժամկետները գրանցվում են նաև թունելի պահպանման աշխատանքների մատյանում: Թունելի պահպանման միջանկյալ դիտարկման ամփոփագրում և թունելի պահպանման աշխատանքների մատյանում գրանցումների հիման վրա կատարվում է թունելի պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտի ընդունումը:

բ) Թունելի պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտի ընդունում

Թունելի պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտի ընդունումը իրականացվում է մինչև հաշվետու ամսվա հաջորդող ամսվա յոթերորդ աշխատանքային օրը: Հիմնվելով միջանկյալ դիտարկումների արդյունքների վրա, կատարվում է թունելի պահպանման գնահատումը՝ արդյունքները ձևակերպելով թունելի պահպանման աշխատանքների ընդունման ամսեկան ամփոփագրում:

8. Պատասխանատուի կողմից թունելի պահպանման աշխատանքները ընդունվում և տվյալ ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնի կողմից վճարվում են ամբողջությամբ, եթե ապահովված են պահպանման պահանջները:

9. Պատասխանատուի կողմից թունելի պահպանման աշխատանքները ընդունվում և տվյալ ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնի կողմից վճարվում են մասնակիորեն՝ աղյուսակ N1-ում բերված տոկոսաչափերով նվազեցումով, եթե պահպանման պահանջները լիարժեք ապահովված չեն:

Աղյուսակ N 1. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման պահանջների ապահովման արժեքների տոկոսային հարաբերակցությունը

Թունելի կոնտրուկտիվ տարրեր, թերություններ և դրանց վերացման պահանջվող առավելագույն ժամկետ	Թերությունը սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում թունելի պահպանման արժեքից պակասեցվող %
ա) Երթևեկամասի և մայթերի մակերես	**20**
Երթևեկամասի և մայթերի վրա աղբի և ավելորդ առարկաների առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 3 ժամ)	*5*
3 մմ –ից ավել լայնությամբ ճաքերի առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 2 օր)	*3*
1000 քառ.մ ծածկի մակերեսի վրա 5 քառ.մ ավել փոսերի առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 5 օր)	*8*
Երթևեկամասի, մայթերի և պատերի վրա մրի ու փոշու առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 1 օր)	*4*
բ) Ջրահեռացման համակարգ	**15**
Թունելի ճակատամուտքերում եզրապատերի և հենապատերի ետնամասում գտնվող վաքերում,ջրահեռացման լեռնային առուներում տիղմի, թափվածքների առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 1 օր)	*3*
Մայթերի ու պաշտպանիչ գոտու եզրաքարերի ու թունելի առանցքով տեղադրված ցամաքուրդային և ջրթող խողովակներում տիղմի և լցվածքների առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 1օր)	*3*
Տիղմազտիչներում և դիտահորերում ճաքերի և ավելորդ առարկաների առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝2օր)	*2*

Թունելային երեսարկման պատերի վրա գրունտային ջրերի հոսք և կաթոց, որոնք հնարավոր է վերացնել առանց կապիտալ վերականգնման (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 3 օր)	*7*
գ) Օդափոխության համակարգ՝ այդ թվում	**15**
Օդափոխության համակարգի ցանկացած անսարքություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 3 օր)	*15*
դ) Լուսավորմանհամակարգ՝ այդ թվում	**15**
Դահանջվող լուսավորության ոչ պատշաճ ապահովում (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 1 օր)	*15*
է) Կապի, հակահրդեհային, արգելափակման և ազդանշանային համակարգերի՝ այդ թվում	**10**
Կապի, հակահրդեհային, արգելափակման և ազդանշանային համակարգերի ցանկացած անսարքություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 1 օր)	*10*
է) Թունելային շինությունների կոնստրուկցիա՝ այդ թվում	**10**
Ճանապարհային նշանների բացակայություն կամ դրանց ոչ բավարար ընթեռնելիություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 1 օր)	*3*
Մայթերի և պաշպանիչ գոտու եզրաքարերի նշագծված չլինելը (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 1 օր)	*3*
Թունելի առանցքային գծանշման բացակայումը կամ դրա ոչ բավարար ընթեռնելիությունը (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 1 օր)	*4*
ը) Թունելի երեսարկ՝ օդափոխության ուղիների հորիզոնական մաս և [illegible] միջնորմներ՝ այդ թվում	**15**
Թունելի մեջ չմշակված ճաքերի առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 5 օր)	*5*
Թունելի մեջ բաց ամրանների առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 5 օր)	*5*
Թունելի մեջ բետոնի և/կամ տվաղի քայքայված և/կամ շերտազատված հատվածների առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 10 օր)	*5*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
ՀՎ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ճանապարհ» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ
«Անելիք բանկ» ՓԲԸ Աբովյանի մ/ճ
ՀՎ 11803011041500
ՀՎՀՀ 03512651

(ստորագրություն)
«ճանապարհ»
ՍՊԸ Կ.Տ.
03512651

Հավելված 2
«____» _____ 2015 թ. կնքված
N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-2»
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2016 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2015 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2016 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
«____» _____ 2015 թ. կնքված
N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏՇԻԳ-16/1-2»
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ---- -ին կնքված N ---------- գնման
(Կատարողի անունը)
պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. --------- ----ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն